

Արտատպված է՝ XX դարի արտասահմանյան արձակ, հատոր 1 (անգլո-ամերիկյան պատմված), Երևանի համալսարանի հրատարակչություն, 1984: Ծանոթագրություններ՝ Ս. Ե. Փանոսյանի:

Օ. ՀԵՆՐԻ

ԿԱՐՄՐԱՄՈՐԹ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՓՐԿԱԳԻՆ

Թարգմ. Աշոտ Առաքելյան

Մտահղացումը հոյակապ էր թվում: Բայց սպասեք, ես հիմա ամեն ինչ կպատմեմ սկզբից: Մենք գտնվում էինք հարավում՝ Ալաբամա նահանգում՝ Բիլլ Դրիսկոլը և ես: Հենց այստեղ էլ մեր մեջ հղացավ երեխա փախցնելու միտքը: Դա պատահեց, ինչպես հետագայում Բիլլն արտահայտվեց, «Ժամանակավոր խելացնորության պահին», բայց այդ բանը մենք շատ ավելի ուշ հասկացանք:

Այնտեղ մի փոքրիկ քաղաք կար, հարթ ու տափակ, ինչպես պաստեղը, որն, անտարակույս, կոչվում էր «Երկնաքեր»: Այդ քաղաքում ապրում էին անմեղ ռամիկներ և այնպես գոհ էին ամեն ինչից, կարծես միշտ համախմբված լինեին մայիսյան պան¹ շուրջը:

Ես ու Բիլլը վեց հարյուր դոլար միացյալ կապիտալ ունեինք, և մեզ պարզապես հարկավոր էր ևս երկու հազար դոլար, որպեսզի գուլիս բերեինք Արևմտյան Իլինոյսում² մեծ հողակտորների հետ կապված շահութաբեր մի գործ: Ամեն ինչի մասին ծանր ու թեթև արեցինք հյուրանոցի մուտքի աստիճանների մոտ: Ջավակասիրությունը, ասացինք, ավելի վառ է արտահայտվում կիսագյուղական համայնքներում: Այդ և մի քանի այլ պատճառներով երեխա փախցնելու ծրագիրն ավելի հեշտությամբ պետք է իրագործվեր այստեղ, քան թերթեր հրատարակող շրջաններում, որոնք գունագեղ շորերով իրենց թղթակիցներին այս ու այն կողմ են ուղարկում՝ նման բաների մասին հարցուփորձ անելու: Մենք գիտեինք, որ այդ փոքրիկ քաղաքը մեզ գտնելու համար ոստիկաններից ավելի հզոր ոչինչ չէր կարող գործի դնել, դե, թերևս, մի քանի ալարկոտ խուզարկու շուն ու մեկ-երկու վարկաբեկիչ հողված «Ֆերմերի շաբաթական բյուջեն» պարբերականում: Այնպես որ հոյակապ միտք էր:

Առևանգման գոհ ընտրեցինք քաղաքում մեծ հարգանք վայելող Էբենեզեր Դորսեթ անունով մի քաղաքացու միևնույն ուղղությամբ: Հայրիկը բարեկիրթ, հնարամիտ ու խստաբարո մարդ էր, եկեղեցական նվիրատվությունների անկաշառ գանձապահ, գրավաթղթերի մեծ գիտակ: Փոքրիկը տասը տարեկան էր, դեմքը ուռուցիկ պեպեններով ծածկված, իսկ մազերը ճիշտ ու ճիշտ այն ամսագրի կազմի գույնին, որը դուք գնում էք կրպակից, երբ գնացքի եք սպասում: Ես ու Բիլլը ենթադրում էինք, որ Էբենեզերը ուղղակի պարելով կտա պահանջվող փրկագինը՝ երկու հազար դոլար և ոչ մի ցենտ պակաս: Բայց սպասեք, ես ամեն ինչ սկզբից կպատմեմ:

«Երկնաքերից» երկու մղոն այն կողմ ոչ բարձր մի սար կար՝ ծածկված մայրիների խիտ թավուտներով, իսկ սարի ետևի կողմում՝ մի քարանձավ, որտեղ պահում էինք մեր մթերքը:

Մի երեկո, արևամուտին, եկտեղանոց մի կառքով անցնում էինք ծերուկ Դորսեթի տան մոտով: Փոքրիկը քարեր էր նետում դիմացի ցանկապատին նստած կատվի ձագուկի վրա:

— Է՛յ, մանչո՛ւկ,— ասում է Բիլլը,— ուզո՞ւմ ես մի մեծ փաթեթ քաղցրավենիք ստանալ ու զբոսնել այս կառքով:

¹ Մայիսյան սյուն – ծաղիկներով ու ժապավեններով զարդարված սյուն, որի շուրջը Մայիսի 1-ին ապրում են Անգլիայում:

² Իլինոյս – նահանգ ԱՄՆ-ի հյուսիսում. վարչական կենտրոնը՝ Սփրինգֆիլդ:

Տղան աղյուսի կտորով մի դիպուկ հարված է հասցնում Բիլլի աչքին։— Մա ծերուկի վրա հավելյալ հինգ հարյուր դոլար կնստի,— ասում է Բիլլը և անիվի վրայով մագլցում դեպի կառքը։

Հետո փոքրիկը սկսեց կռվել, կարծես միջին քաշային դարչնագույն արջ լիներ, բայց վերջապես նրան ներս խցկեցինք կառքի ներքևի մասը և շարժվեցինք։

Մենք նրան քարանձավ տարանք։ Ես ձին կապեցի մայրուտում։ Երբ մութն ընկավ, կառքը տարա մի փոքրիկ գյուղ, երեք մղոն այն կողմ, որտեղից մենք այն վարձել էինք, և ոտքով ետ դարձա։

Բիլլն իր դեմքի չանգոված ու արնակալված մասերին կաշուն սպեղանի էր դնում։ Քարանձավի մուտքի մոտ, ժայռաբեկորի ետևում կրակ էր վառվում, իսկ տղան իր կարմրաշեկ մագերի մեջ բազեի պոչի փետուրներ խրած ուշի-ուշով նայում էր եռացող սրճեփին։ Ես մոտենում եմ, իսկ նա իր ձեռքի փայտը վեր է բարձրացնում ու ասում.

— Է՛յ, դո՛ւ, անիծյալ դժգույն մոռ՛ւթ, ինչպե՞ս ես համարձակվում ներս մտնել Կարմրամորթ Առաջնորդի՝ այս տափաստանների ահ ու սարսափի ճամբարը։

— Հիմա դեռ լա՛վ է, — ասում է Բիլլը՝ սրունքների վնասվածքները զննելու համար վեր բարձրացնելով տաբատը։— Մենք հնդկացի-հնդկացի էինք խաղում։ Բուֆֆալո Բիլլի³ կրկեսային ներկայացումը մեր արածի համեմատությամբ պարզապես պաղեստինյան քաղաքապետարանում կատարվող տեսարաններ են՝ մոգական լապտերի մեջ։ Ես թակարդներ դնող ծերուկ Հենկն եմ՝ Կարմրամորթ Առաջնորդի գերին։ Լուսաբացին գլխիս մաշկը պետք է հանեն։ Սո՛ւրբ նահատակնե՛ր։ Եվ ինչ ծանր հարված ունի այդ թզուկը։

Այո՛, պարոն, այդ տղան ակներևաբար հաճույք էր քաղում կյանքի յուրաքանչյուր ակնթարթից։ Ճամբարը, որ տեղ էր գտել քարանձավում, հրապուրել էր նրան, ու ջնջել հիշողությունից այն, որ հենց ինքն էր գերին։ Օձի աչք ու Լրտես հորջորջեց նա ինձ իսկույններս ու հայտարարեց, որ երբ իր զինվորները վերադառնան ռազմարշավից, ինձ ողջ-ողջ կխորովեն լուսաբացին՝ ճթճթացող խարույկի վրա։

Հետո մենք ընթրեցինք։ Որքան հնարավոր էր, խոզի ապխտած միս, հաց, մեկ էլ հյուր լցրեց բերանն ու սկսեց խոսել։ Ընթրիքի սկզբից մինչև վերջ մոտավորապես այսպիսի մի ճառ արտասանեց.

— Ինձ դուր է գալիս այս ամենը։ Ես ոչ մի անգամ դեռ չեի քնել դրսում։ Ես վարժեցրած պարկամուկ ունեի, իսկ անցյալ տարի՝ ծննդյան օրը դարձա ինը տարեկան։ Ես ատում եմ դպրոցը։ Առնետները խժոեցին մորաքույր Ջիմմի Տալբոտի չալպտուրիկ հավերի ձվերը։ Տասնվեց հատ։ Այս անտառներում իսկական հնդկացիներ կա՞ն։ Ինձ մի քիչ էլ հյուր տվեք։ Ծառերի շարժվելո՞ւց է քամի լինում։ Մենք հինգ հատ շան ձագ ունեինք։ Այդ ինչի՞ց է քո քիթն այդպես կարմիր, Հենկ։ Հայրս կույտերով փող ունի։ Աստղերը տա՞ք են։ Շաբաթ օրը Էդ Ուոլքերին դնքսեցի երկու անգամ։ Ցույլը ձայն հանո՞ւմ է։ Ինչո՞ւ են նարինջները կլոր։ Այս քարանձավում մահճակալներ ունե՞ք, որ կարգին քնենք։ Ամոս Մյուրեյը ամեն ոտին վեց մատ ունի։ Թութակը կարողանում է խոսել, իսկ կապիկն ու ձուկը՝ ոչ։ Ինչի՞ն ինչ գումարենք, որ լինի տասներկու։

Հինգ րոպեն մեկ կհիշեցներ, որ ինքը սարսափազդու կարմրամորթ է, հետո կվերցներ իր փայտը, որը նրա համար որպես հրացան էր ծառայում, մատների ծայրերի վրա կգնար դեպի քարանձավի մուտքը, որպեսզի բռներ գարշելի սպիտակամորթ լրտեսներին։ Ժամանակ առ ժամանակ, իբրև հարձակման ազդանշան, մի այնպիսի ճիչ էր արձակում, որ թակարդներ

³ Բուֆֆալո Բիլլ – կովբոյ, հետագայում կրկեսի տնօրեն Ուիլյամս Ֆրեդերի Կոդլի (1846-1917) մականունը։

դնող ծերունկ Հենկը ցնցվում էր ամբողջ մարմնով: Այդ տղան հենց սկզբից էր սահմոկեցրել Բիլլին:

— Կարմրամորթ Առաջնորդ,— ասում եմ տղային,— ուզո՞ւմ ես տուն գնալ:

— Ա՛հ, շատ պե՛տքս է: Տխուր է այնտեղ: Դպրոցն էլ տանել չեմ կարողանում: Իսկ այստեղ ինձ դուր է գալիս: Դու ինձ տուն չես տանի, չե՞, Օձի աչք:

— Դեռ ոչ,— ասում եմ:— Մենք դեռ մի քիչ կմնանք այս քարանձավում:

— Ա՛յ թե լավ բան կլինի,— ասում է նա:— Ես իմ ամբողջ կյանքում այսքան չէի ուրախացել:

Ժամը տասնմեկին մոտ պառկեցինք քնելու: Գետնին մի քանի հատ բրդյա ու մզդակած լայն վերմակ գցեցինք և Կարմրամորթ Առաջնորդին պառկեցրինք մեր մեջտեղում: Նա չէր փախչի, դրանում վստահ էինք: Երեք ժամ շարունակ մեզ արթուն պահեց: Յուրաքանչյուր ճյուղի շաչուն ու տերևի շրշյուն նրա նորաթուխ երևակայությունն ընկալում էր որպես մոտեցող հրոսակախմբի ոտնաձայներ, ու նա վեր էր ցատկում, վերցնում հրացանը, մերթ իմ, մերթ Բիլլի ականջի մեջ ճղճղում՝ «Մը՛սս, ձա՛յնդ»: Վերջապես ես մղձավանջային քուն մտա և երազում տեսա, թե իբր կարմրաշեկ մազերով մի խուժադուժ ծովահեն փախցրել էր ինձ ու շղթաներով կապել ծառից:

Լուսաբացին արթնացա Բիլլի զարհուրելի ծորտոցներից: Դա ոչ տրտնջոց էր, ոչ ոռնոց, ոչ ճիչ, ոչ վայնասուն, ոչ վնգստոց, ինչպիսին կարող է արձակել տղամարդու արտասանական օրգանների ողջ համակարգը: Դրանք պարզապես անպատկառ, ահարկու, ստորացուցիչ ծորտոցներ էին, ինչպիսիք կանայք են արձակում՝ ուրվական կամ արյունաբբու կենդանի տեսնելիս: Ահավոր բան է, երբ լուսաբացին քարանձավով մեկ լսում ես ամրակազմ, հաստամարմին ու խիզախ մի մարդու անզուսպ ծորտոցները:

Ես վեր ցատկեցի տեսնելու, թե ինչ էր կատարվում: Կարմրամորթ Առաջնորդը նստել էր Բիլլի կրծքավանդակին, մի ձեռքով բռնել Բիլլի մազերը, մյուսով՝ միս կտրելու սրասայր դանակը և, համաձայն նախորդ երեկոյան կայացված դատավճռի, մոլեգնաբար ու գործնական տեսքով փորձում էր հանել նրա գանգամաշկը:

Ես խլեցի դանակը այդ թզուկի ձեռքից և նորից պառկեցրի քնելու: Սակայն այդ պահից ի վեր Բիլլի հոգին ջուր էր կտրել: Նա պառկեց կողքի վրա, սակայն ամբողջ այն ժամանակաընթացքում, ինչ այդ տղան մեզ հետ էր, էլ ոչ մի անգամ աչք չփակեց: Ես մի քիչ ննջեցի, բայց արևի դուրս գալուն պես հանկարծ հիշեցի. Կարմրամորթ Առաջնորդը զգուշացրել էր, որ լուսաբացին ինձ խորովելու են ճրճթացող խարույկի վրա: Ոչ այն է՝ նյարդերս էին լարված, ոչ այն է՝ վախեցած էի, սակայն վեր կացա, նստեցի, վառեցի ծխամորձս, ու հենվեցի ժայռին:

— Այս ինչո՞ւ ես այսքան շուտ արթնացել, Մեմ,— հարցրեց Բիլլը:

— Ե՛ս,— ասում եմ:— Օ՛ֆֆ, ուսս մի տեսակ ցավում է: Մտածեցի՝ մի քիչ նստեմ, գուցե անցնի:

— Ստո՛ւմ ես,— ասում է Բիլլը:— Դու վախենո՛ւմ ես: Լուսաբացին նա ուզում էր քեզ խորովել, և դու վախեցել ես, որ նա այդ բանը կանի: Եվ կաներ, իհարկե, եթե լուցկի գտներ: Չե՞ որ սարսափելի է, Մեմ: Եվ մի թե կարծում ես, թե այդ թռկից փախածին տուն վերադարձնելու համար քեզ փող կտան:

— Համոզված եմ,— ասում եմ ես:— Հենց սրա նման վայրագներին են ծնողները պաշտում: Իսկ հիմա վեր կացեք ու Կարմրամորթի հետ նախաձաշ պատրաստեք, մինչև ես ելնեմ այս սարի գագաթն ու շրջակայքը հետազոտեմ:

Բարձրանալով փոքրիկ սարի գագաթը, ես հայացքով չափեցի մոտակա շրջակայքը: «Երկնաքերի» մատույցներում հույս ունեի տեսնել գերանդիներով ու եղաններով զինված ամրակազմ ֆերմերների, որոնք տակնուվրա են անում ամեն ինչ՝ այդ ստորաքարշ

առնանգողներին գտնելու համար: Սակայն փոխարենը տեսա խաղաղ բնապատկեր, ինչպես նաև մի մարդու, որն իր մոխրագույն քարշակով հողն էր փխրեցնում: Ոչ-ոք չէր փորփրում գետաբերանը, չկար որևէ մեկը, որ դես ու դեն ընկած վազվզեր ու վշտից խենթացած ծնողներին մի լուր տաներ, գոնե՝ «Դեռևս ոչինչ հայտնի չէ»: Անտառային քնաբեր հանդարտությամբ էր լցված Ալաբամա նահանգի տերիտորիայից կարծես դուրս մնացած այս հողակտորը, որը փռված էր իմ առջև: «Հավանաբար,— ասում եմ ինքս ինձ,— դեռ չեն հայտնաբերել, որ գայլերը փարախից հափշտակել են իրենց քնքուշ գառնուկին: Աստված, օգնի՛ր գայլերին,— ասում եմ ես և նախաճաշելու իջնում սարն ի վար»:

Քարանձավին մոտենալով, տեսա, որ Բիլլը մեջքով կպել էր պատին, ու դժվարությամբ էր շնչում, իսկ տղան հենց այն է, պատրաստվում էր ամբողջ ուժով թրխկացնել նրա գլխին համարյա կոկոսյան ընկույզի մեծության մի քարով:

— Նա հուրհրան կարտոֆիլ գցեց օձիքիցս ներս,— բացատրեց Բիլլը,— հետո էլ ոտքերով տրորեց այն մեջքիս վրա, իսկ ես նրան ապտակեցի: Հրացանը քեզ մոտ չի՞, Սեմ:

Ես տղայի ձեռքից վերցրեցի քարը ու քիչ թե շատ հարթեցի այդ միջադեպը:

— Ես քեզ ցո՛ւյց կտամ,— ասում է տղան Բիլլին:— Դեռ ոչ մեկը, ով փորձել է խփել Կարմրամորթ Առաջնորդին, էժան չի պրծել նրա ձեռքից: Այնպես որ, զգուշացի՛ր:

Նախաճաշից հետո տղան իր գրպանից մի կտոր կաշի է հանում ու դուրս գալիս քարանձավից՝ ճանապարհին քանդելով դրա վրա փաթաթված թելը:

— Հիմա՞ ինչ է ուզում անել,— անհանգստացած ասում է Բիլլը:— Սե՛մ, քո մտքով չի՞ անցնում, որ նա կարող է փախչել:

— Մի՛ վախենա,— ասում եմ ես:— Նա քո իմացած տնակյաց փափկասուններից չի երևում: Սակայն բոլոր դեպքերում պետք է մի բան մտածենք փրկագնի համար: Նրա անհետացման կապակցությամբ «Երկնաքերի» մատույցներում ոչ մի իրարանցում չկա, բայց, հնարավոր է, որ դեռ չեն հասկացել, թե ինչն-ինչոց է: Այդ մարդիկ երևի մտածում են, թե նա գիշերել է մորաքույր Ջեյնի կամ էլ հարևաններից մեկի տանը: Ինչևէ, նրա պակասն այսօր կզգացվի: Իսկ երեկոյան մենք մի գրություն կուղարկենք հորը և որդուն վերադարձնելու համար կպահանջենք երկու հազար դոլար:

Հենց հաջորդ ակնթարթին մի այնպիսի աղմուկ-աղաղակ լսեցինք, որպիսին միայն Դավիթը կարող էր անել, երբ գետնին էր փռել մարտիկ Գողիաթին⁴: Բայց ո՛չ: Դա Կարմրամորթ Առաջնորդն էր, որ իր գլխավերևում պտտեցնում էր քիչ առաջ գրպանից հանած պարսատիկը:

Ես հապճեպորեն շրջվեցի՝ լսելով ծանրահունչ ու խուլ մի ձայն, հետո էլ մի այնպիսի փնչոց, ինչպիսին ձիերն են հանում, երբ ազատվում են թամբից: Ձվի չափ սև մի քար թրխկացել էր Բիլլի գլխին՝ ձախ ականջի մոտ: Նա ամբողջ մարմնով թուլացավ և ընկավ կրակի վրա՝ կոթավոր կաթսայի կողքին, որի մեջ ամանեղենը լվանալու ջուրն էր եռում: Ես Բիլլին դուրս քաշեցի բոցերի միջից և ուղիղ կես ժամ սառը ջուր լցրեցի նրա գլխին:

Հետո, կամաց-կամաց, Բիլլն ուշքի է գալիս, նստում, շոշափում ականջի ետևի մասն ու ասում.

— Սեմ, դու գիտե՞ս, թե ով է իմ սիրելի բիբլիական հերոսը:

— Դե լա՛վ, մի՛ հուզվիր,— ասում եմ:— Շուտով խելքի կգաս:

⁴ ... միայն Դավիթը կարող էր անել, երբ գետնին էր փռել մարտիկ Գողիաթին – ըստ «Աստվածաշնչի» բեթլեհեմցի հովիվ Դավիթը, որը հետագայում դարձավ հրեական թագավոր, մենամարտում սպանում է ահարկու ուժի տեր փղշտացի Գողիաթին (տե՛ս Ա. Թագավորաց, գլ. ԺԷ):

— Տերն Հերովդէ՛սը⁵,— ասում է նա:— Մի՛ գնա, ինձ մենակ մի՛ թող, Մեմ:

Ես դուրս եկա, բռնեցի տղային ու այնպես թափահարեցի, որ դեմքի պեպենները զրնգացին:

— Եթե քեզ լավ չպահես,— ասում եմ,— ես քեզ ուղիղ տուն կտանեմ: Հը, լա՞վ ես պահելու քեզ, թե չէ:

— Բայց ես կատակ էի անում,— հոնքերը խոժոռելով ասում է նա:— Ես չէի ուզում նեղացնել ծերուկ Հենկին: Իսկ նա ինչո՞ւ ինձ խփեց: Լա՛վ, ես ինձ լավ կպահեմ, Օձի աչք, եթե դու ինձ տուն չուղարկես ու թողնես, որ այսօր խաղամ Հետախույզ խաղը:

— Ես այդ խաղը չգիտեմ,— ասում եմ:— Այդ արդեն դու և միստեր Բիլլը կորոշեք: Նա այսօր կլինի քո խաղընկերը: Ես մի գործ ունեմ և կարճ ժամանակով պետք է գնամ: Դե, ներս արի ու հաշտվիր Բիլլի հետ, մեկ էլ ներողություն խնդրիր նրանից՝ խփելու համար, թե չէ՝ հենց հիմա ուղիղ տո՛ւն:

Ես ստիպեցի, որ նրանք ձեռք ձեռքի տան, իսկ հետո Բիլլին մի կողմ տարա ու ասացի, որ գնում եմ քարանձավից երեք մղոն այն կողմ գտնվող փոքրիկ մի գյուղ՝ Փոփլար Քոմ, պարզելու համար, թե ինչ տրամադրություն է տիրում «Երկնաքերում» երեխայի անհետանալու կապակցությամբ: Բացի այդ, շատ նպատակահարմար էի գտնում այդ օրը մի վերջնագիր ուղարկել ծերուկ Դորսեթին, որով պետք է պահանջեի փրկագինը և ցուցումներ տայի, թե ինչպես էր այն վճարելու:

— Դու լավ գիտես, Մեմ,— ասում է Բիլլը,— որ առանց աչք թարթելու ես միշտ քո կողքին եմ մնացել երկրաշարժերի ու փոթորիկների, հրդեհների ու ջրհեղեղների, կատաղի պայթեցումների, ուստիկանական շուրջկալների, գնացքների վրա կատարած հարձակումների ու թղթախաղերի ժամանակ: Ես մինչև հիմա ոչ մի բանից չէի վախեցել, քանի դեռ չէինք փախցրել երկուտանի հրթիռակիր այս թզուկին: Նա իմ հոգին հանեց: Դու ինձ նրա հետ երկար չես թողնի, չէ՛, Մե՛մ:

— Կվերադառնամ մինչև մութն ընկնելը: Այդ ընթացքում դու պետք է զբաղվես ու հանգստացնես փոքրիկին: Իսկ այժմ մենք մի նամակ կգրենք ծերուկ Դորսեթին:

Ես և Բիլլը թուղթ ու մատիտ վերցրինք և անցանք գործի, իսկ Կարմրամորթ Առաջնորդը, մինչ այդ, հաստ վերմակի մեջ փաթաթված, գոհ տեսքով վեր ու վար էր անում քարանձավի մուտքի մոտ: Բիլլն աղիոդորմ խնդրում էր ինձ, որ փրկագինը դարձնեմ մեկ ու կես հազար՝ երկու հազարի փոխարեն:

— Ես ամենևին էլ միտք չունեմ արժեզրկել ծնողական փառապանծ զգացմունքի բարոյական կողմը, բայց չէ՞ որ մենք գործ ունենք մարդկանց հետ, և բացի այդ, ո՞ր մի բանական արարածը կիրաժարվի երկու հազար դոլլարից այս չաղիկ ու պեպենոտ վայրի կատվի համար: Անձամբ ես ուզում եմ բախտս փորձել հազար հինգ հարյուր դոլարով: Տարբերությունը կարող ես ինձնից գանձել:

Այսպիսով, Բիլլին հանգստացնելու համար ես համաձայնվեցի, և միահամուռ ուժերով մի նամակ գրեցինք հետևյալ բովանդակությամբ:

Էսկվայր⁶ Էբենեզեր Դորսեթին.

⁵ Հերովդես – հրեական թագավոր (մ. թ. ա. 73-74 թթ.): «Նոր կտակարանի» համաձայն, մոգերից տեղեկանալով Քրիստոսի ծննդյան մասին՝ Բեթեղեմում կոտորել է տալիս մինչև երկու տարեկան մանկանց (տե՛ս Մատթեոս, գլ. Բ):

Հավանություն տալով Հերովդեսի չարագործությանը՝ պատմվածքի հերոսն անուղղակիորեն ընդգծում է տղային սպանելու իր ցանկությունը:

Մենք ձեր որդուն թաքցրել ենք «Երկնաքերից» հեռու մի ապահով վայրում: Եվ դուք, և ամենահմուտ հետախույզները միայն զուր ջանքեր կգործադրեն, եթե փորձեն գտնել նրան: Ձեր որդուն կստանաք այն դեպքում, եթե առանց երկմտելու կատարեք հետևյալ վերջնական պայմանները. նրան վերադարձնելու համար մենք պահանջում ենք հազար հինգ հարյուր դոլար: Փողը ձեր պատասխանի հետ պետք է դրվի այսօր նույն տեղում, միննույն տուփի մեջ, ինչպես ստորև կբացատրվի: Եթե համաձայն եք նշված պայմաններին, ապա որևէ մեկի միջոցով ուղարկեք ձեր գրավոր պատասխանը այսօր, երեկոյան ութն անց կեսին: «Բարդիների պուրակ» տանող ճանապարհի վրա, «Բվեճի վտակն» անցնելուց հետո, աջ կողմում, հենց ցորենի դաշտի ցանկապատի մոտ, իրարից հարյուր յարդ⁷ հեռավորության վրա կանգնած են երեք հաստաբուն ծառեր: Ցանկապատի սյուներից մեկի տակ, երրորդ ծառի դիմաց, ձեր ավետաբերը կգտնի սովորաբար փոքրիկ մի տուփ: Նա պետք է պատասխանը դնի այդ տուփի մեջ և անմիջապես վերադառնա «Երկնաքեր»:

Եթե փորձեք մատնել մեզ կամ էլ չհաճեք կատարել նշված պայմանները, այլևս երբեք չեք տեսնի ձեր որդուն:

Եթե վճարեք փողը ինչպես պահանջվում է, նա անվնաս տուն կվերադառնա երեք ժամվա ընթացքում:

Այս պայմանները վերջնական են, և եթե չընդունեք դրանք, ապա մեր կողմից հետագայում ոչ մի այլ տիպի հաղորդակցության փորձ չի արվի:

ԵՐԿՈՒ ԶԱՐԱԳՈՐԾՆԵՐ

Նամակը հասցեագրեցի Դորսեթին ու դրեցի գրպանս: Երբ արդեն ուզում էի դուրս գալ, այդ տղան ինձ է մոտենում ու ասում.

— Է՛յ, Օձի աչք, դու ասացիր, թե կարող եմ խաղալ Հետախույզ խաղը, քանի դեռ այստեղ չես լինի:

— Խաղա՛, իհարկե, խաղա՛, — ասում եմ ես: — Միստեր Բիլլն էլ է ուզում խաղալ: Իսկ դա ի՞նչ խաղ է:

— Ես հետախույզ եմ, — ասում է Կարմրամորթ Առաջնորդը, — և մի արագավազ ձիով պետք է սլանամ դեպի ամրոց ու նախագգուշացնեմ, որ հնդկացիները գալիս են: Ես ձանձրացել եմ հնդկացի լինելուց: Ուզում եմ հետախույզ լինել:

— Շա՛տ լավ, — ասում եմ ես: — Իմ կարծիքով դա անվնաս խաղ է և միստեր Բիլլը կօգնի քեզ խափանելու այդ գարշելի բարբարոսների պլանները:

— Իսկ ես ի՞նչ պետք է անեմ, — ասում է Բիլլը՝ կասկածամտորեն նայելով տղային:

— Դու իմ ձին ես լինելու, — ասում է հետախույզը: — Իսկ հիմա չո՛չ արա տեսնե՛մ: Թե չէ առանց հեծկանի ո՞նց եմ սուրալու դեպի ամրոց:

— Կարծում եմ, լավ կլինի զվարճացնես նրան, — ասում եմ Բիլլին, — մինչև կարողանանք գլուխ բերել այդ գործը: Մի քիչ կթռչկոտես և վերջ:

⁶ Էսկբայր – պատվավոր տիտղոս Մեծ Բրիտանիայում (միջնադարում՝ ասպետի զինակիրը). Այստեղ օգտագործվում է «ջենթլմենի» նշանակությամբ:

⁷ Յարդ – երկարության միավոր. 1 յարդը հավասար է 3 ֆուտի կամ 0,9 մետրի:

Բիլլը չորեքթաթ է անում ու նայում ինձ աչքերի այնպիսի արտահայտությամբ, ինչպես կնայեր ծուղակն ընկած նապաստակը:

— Այդ ամբողջը հեռո՞ւ է այստեղից, մա՛նչս,— խոպոտ ձայնով հարցնում է նա:

— Իննսուն մղոն,— ասում է հետախույզը:— Այն էլ իմացիր, որ պետք է արագացնես, որպեսզի ժամանակին տեղ հասնենք: Դե՛, գնացի՛նք:

Հետախույզը ցատկում է Բիլլի մեջքին ու կրունկներով հարվածում նրա կողերին:

— Ասածո՛ւ սիրո՛ւն,— ասում է Բիլլը,— շո՛ւտ վերադարձիր, Մե՛մ, որքան հնարավոր է, շո՛ւտ: Երանի հազար դոլարից ավելի պահանջած չլինեինք: Է՛յ, դո՛ւ, հերիք ոտքերով խփես, թե չէ հիմա ոտքի կելնեմ ու մի լավ կքոթակեմ քեզ:

Ես ուղևորվեցի դեպի Փոփլար Քոփ: Հասնելով այնտեղ, կանգ առա ու նստեցի փոստատան խանութի մոտերքում, զրուցեցի առևտուր անելու եկած ռամիկների հետ: Մի մորուքավոր էլ ասաց, որ իր ականջին է հասել, թե «Երկնաքերը» ծայրեծայր իրարանցման մեջ է՝ երեցփոխ Էբենեզեր Դորսեթի որդու կորստյան կամ, ինչպես կարծում են շատերը, առևանգման պատճառով: Դա այն ամենն էր, ինչ ցանկանում էի իմանալ: Ես մի քիչ ծխախոտ գնեցի, հենց այնպես հարցրեցի, թե ինչ արժեք սիսեռը, նամակն աննկատելիորեն գցեցի արկղի մեջ ու գնացի: Փոստի կառավարիչն ասաց, որ մի ժամից փոստատարը կգա ու փոստը քաղաք կտանի:

Ես վերադարձա քարանձավ, Բայց ո՛չ Բիլլին տեսա, ո՛չ էլ տղային: Ջննեցի քարանձավի շրջակայքը, նույնիսկ սիրտ արեցի մեկ-երկու անգամ ձայն տալ, Բայց ոչ ոք չպատասխանեց:

Դե, ինչ արած, վառեցի ծխամորձս, բազմեցի ճմապատ հողաթմբին՝ սպասելով իրադարձությունների զարգացմանը:

Մոտավորապես կես ժամ անց թփերի մեջ խշխշոց լսեցի, իսկ հետո տեսա Բիլլին, որն օրորվելով մոտենում էր քարանձավի առջևի բացատին: Նրա ետևից, խորամանկ ժպիտը դեմքին, հետախույզի պես քայլելով գալիս էր տղան: Բիլլը կանգ առավ, հանեց գլխարկն ու կարմիր թաշկինակով մաքրեց դեմքը: Մոտավորապես ութ ֆուտ⁸ հեռավորության վրա էլ փոքրիկը կանգ առավ:

— Մեմ,— ասում է Բիլլը,— դու, երևի, ինձ դավաճան համարես, Բայց համբերությանս բաժակը լցվեց: Ես տարիքս առած մարդ եմ, ունեմ այրական տվյալներ և ընդունակ եմ ինքնապաշտպանության, Բայց լինում են պահեր, երբ ինքնասիրության և ինքնատիրապետման մեխանիզմները դավաճանում են: Տղան գնաց: Ես նրան տուն ուղարկեցի: Վերջ ամեն ինչին: Հնագույն ժամանակներից ի վեր տառապյալներ շատ են եղել,— շարունակում է Բիլլը,— որոնք գերադասել են մեռնել, Բայց չեն հրաժարվել իրենց նախասիրած զբաղմունքից: Բայց նրանցից ոչ մեկը երբևէ այնպիսի գերբնական տանջանքներ չի կրել, ինչպես ես: Շատ էի ցանկանում հավատարիմ մնալ մեր կողոպտչական կանոնադրությանը, Բայց ո՛չ, ամեն ինչ իր սահմանն ունի:

— Ի՞նչ է պատահել, Բիլլ,— հարցնում եմ նրան:

— Ես չորեքթաթ սուրացի մինչև ամբողջ՝ ուղիղ իննսուն մղոն: Հետո, երբ բնակիչները փրկված էին, ինձ վարսակ տվեցին: Դրա փոխարեն հաճույքով ավագ կուլ կտայի: Իսկ հետո, ամբողջ մի ժամ, ես փորձում էի բացատրել նրան, թե ինչու անցքերի մեջ ոչինչ չի լինում, ինչպես է, որ ճանապարհը երկու կողմ ունի և ինչու է խոտը կանաչ: Հավատա ինձ, Մեմ, ոչ մի մարդկային էակ այդ ամենին չէր դիմանա: Դե, ես էլ բռնում եմ նրա օձիքից ու քարշ տալիս սարն ի վար: Ճանապարհին ոտքերով խփում է իմ ոտքերին ու ծնկներիցս ներքև լրիվ կապտացնում: Երկու-երեք տեղից էլ կծել է բութ մատս ու ձեռքս, և հիմա պետք է այդ

⁸ Ֆուտ – երկարության միավոր. 1 ֆուտը հավասար է 3 դյույմի կամ 0,3 մետրի:

խայթոցները խաբեն: Բայց նա արդեն գնացել է,— շարունակում է Բիլլը:— Նա արդեն տա՛նն է: Ես նրան ցույց տվեցի «Երկնաքեր» տանող ճանապարհը, ոտքով էլ մի այնպիսի հարված հասցրեցի, որ թռավ ու ընկավ ինձնից ութ ֆուտ հեռավորության վրա: Ցավում եմ, որ այդքան գումար ենք կորցնում, բայց մենք կամ փրկագինը պետք է ստանայինք, կամ էլ Բիլլ Դրսիկովը պետք է գժանոց ընկներ:

Նա ծանրահունչ հնում է, չնայած նրա վարդակարմիր դիմագծերն արտահայտում են աննկարագրելի հանդարտություն ու կատարյալ բավարարվածություն:

— Բիլլ,— հարցնում եմ,— ձեր ընտանիքում ոչ մեկը սրտային հիվանդությամբ չի՞ տառապել:

— Ո՛չ,— ասում է Բիլլը,— մալարիայից ու դժբախտ պատահարներից բացի ոչ մի խրոնիկ հիվանդություն չի եղել:

— Այդ դեպքում միգուցե շրջվես ու ե՞տ նայես:

Բիլլը շրջվում է, տեսնում տղային, անմիջապես գույնը գցում, շրմփոցով վայր ընկնում և սկսում գետինը փորփրել ու խոտը պոկոտել: Մոտ մի ժամ այդպես շարունակվեց. ես կարծում էի, թե խելքը թռցրել է: Հետո ասացի նրան, որ ըստ իմ ծրագրի պետք է շուտափույթ կերպով վերջացնենք այս գործը: Մենք կվերցնենք փրկագինն ու աննկատելիորեն կծլկենք կեսգիշերին, եթե միայն ծերուկ Դորսեթը ընդունի մեր առաջարկած պայմանները:

Բիլլը բավականին ոգևորվեց, նույնիսկ ժպիտի նման մի թույլ արտահայտություն տալով դեմքին՝ նայեց տղային ու խոստացավ խաղալ ռուս-ճապոնական պատերազմ⁹ խաղը, հենց որ սկսեր մի փոքր ավելի լավ զգալ իրեն:

Իմ ծրագրի մեջ մտնում էր նաև այն, թե ինչպես էինք վերցնելու փրկագինը՝ բացառելով դավադիրների կողմից բռնվելու վտանգը, մի բան, որին հավանություն կտային նաև պրոֆեսիոնալ առևանգողները: Այն պոնը, որի տակ պետք է դրվեր պատասխանը, այնուհետև՝ նաև փողը, գտնվում էր ճանապարհի վրա՝ ցանկապատի մոտ, որը չորս կողմից շրջապատված էր ամայի ու լայնատարած դաշտերով: Եթե դավադիրների խումբը փորձեր հետևել այդ մարդուն, որը գալու էր նամակի ետևից, ապա նրան կտեսներ մեծ հեռավորության վրա՝ դաշտերից ու ճանապարհից այն կողմ: Ո՛չ, պարոնայք, գուցե ավելի շուտ ձեր ականջի ետևը տեսնեք:

Ուղիղ ութն անց կեսին ես նստած էի ծառի հաստ ճյուղին և ծառաթրթուրից էլ լավ թաքնված սպասում էի ավետաբերին:

Ճիշտ պայմանավորված ժամին գալիս է մի դեռահաս հեծանվորդ, ցանկապատի սյան տակ գտնում սովաքաթոթե տուփը, այնտեղ գցում մի ծալված թուղթ, հետո սեղմում ոտնակին ու ետ ուղղվում դեպի «Երկնաքեր»:

Մի ժամ սպասելուց հետո համոզվեցի, որ ամեն ինչ կարգին է, սահելով ցած իջա ծառից, վերցրեցի երկտողը, կուզեկուզ անցա ցանկապատի երկայնքով, հասա անտառին և կես ժամից արդեն քարանձավում էի: Ես բացեցի նամակը, մոտեցա լապտերին ու բարձրաձայն կարդացի Բիլլի համար: Այն դրված էր անհասկանալի ձեռագրով, որի միտքն ու բովանդակությունն այս էր.

ԵՐԿՈՒ ԶԱՐԱԳՈՐԾՆԵՐԻՆ

⁹ Ռուս-ճապոնական պատերազմ – խոսքը 1904-1905 թթ. իմպերիալիստական պատերազմի մասին է, որն ավարտվեց ռուսական բանակի պարտությամբ և Պորտսմիթի հաշտությամբ:

Պարոնայք, ես այսօրվա փոստով ստացա ձեր նամակը, որով իմ որդուն վերադարձնելու համար փրկագին եք պահանջում: Ես կարծում եմ, որ դուք փոքր-ինչ հեռու եք գնացել ձեր պահանջների մեջ, և սույնով ձեզ եմ առաջադրում իմ հակապահանջը, որը, ինչպես հակված եմ ենթադրելու, կընդունեք: Դուք տուն եք բերում Ջոննիին և ինձ կանխիկ մուծում երկու հարյուր հիսուն դոլար: Միայն այդ դեպքում ես կհամաձայնվեմ ազատել ձեզ նրանից: Դուք լավ կանեք գիշերով գաք, քանի որ հարևանները կարծում են, թե նա կորել է, և ես վստահորեն չեմ կարող ասել, թե նրանք ինչ կանեն, եթե տեսնեն այն մարդուն, որը տուն կբերի Ջոննիին:

ՄԵԾԱԳՈՒՅՆ ՀԱՐԳԱՆՔՆԵՐՈՎ՝
ԷԲԵՆԵՋԵՐ ԴՈՐՍԵԹ

— Փենգանսի¹⁰ մեծն ծովահեննե՛ր,— ասում եմ ես,— մի՞ թե այսպիսի լկտիություն...

Ես նայեցի Բիլլին, բայց չհամարձակվեցի խոսել: Նրա աչքերում այնպիսի աղերսական արտահայտություն կար, ինչպիսին երբեք չէի տեսել ո՛չ անբարբառ, ո՛չ էլ բարբառող որևէ կենդանու աչքերում:

— Սե՛ւ,— ասում է նա,— ի՞նչ մեծ բան է, վերջիվերջո, երկու հարյուր հիսուն դոլարը: Այդքան փող մենք ունենք: Եվս մի գիշեր նրա հետ, և ինձ կուղարկեն Բեդլամ¹¹: Կատարյալ ջենտլմեն լինելով հանդերձ, կարծում եմ, որ միստեր Դորսեթը նաև առատաձեռն մարդ է, եթե այդպիսի վեհանձն առաջարկություն է անում: Մի՞ թե ուզում ես բաց թողնել նման հնարավորությունը, Սեւ:

— Ճիշտն ասած Բիլլ,— ասում եմ ես,— այս փոքրիկ գառնուկը իմ ներվերի վրա էլ է մի քիչ ազդում: Մենք նրան տուն կտանենք, կմուծենք փրկագինն ու կթողնենք-կգնանք այստեղից:

Այդ գիշեր նրան տուն տարանք: Համոզեցինք, որ գնա՝ խաբելով, թե հայրիկը արժաթափող հրացան է գնել, մեկ էլ՝ մոկասիններ¹², իսկ հաջորդ օրը պետք է գնանք արջ որսալու:

Ուղիղ ժամը տասներկուսն էր, երբ բախեցինք Էբենեզերի տան մուտքի դուռը: Հենց այդ ժամանակ, երբ պան տակ տուփից, սկզբնական պահանջագրի համաձայն, պետք է հանելիս լինեի հագար հինգ հարյուր դոլարը, Բիլլը հաշվում ու Դորսեթի ձեռքի մեջ էր դնում երկու հարյուր հիսուն դոլարը:

Երբ մանչուկը հասկացավ, որ ուզում ենք իրեն տանը թողնել, այնպիսի մի ոռնոց հանեց, ինչպիսին չէր հանի գալարափողը, և տգրուկի պես կպավ Բիլլի ոտքերին: Հայրիկն աստիճանաբար պոկեց նրան այնպես, ինչպես պաստառը կպոկեն պատից:

— Ինչքա՞ն ժամանակ կարող եք բռնել նրան,— հարցնում է Բիլլը:

— Ես առաջվա ուժը չունեմ,— ասում է ծերուկ Դորսեթը,— բայց կարծում եմ, որ տասը րոպե կարելի է խոստանալ:

— Դա բավական է,— ասում է Բիլլը:— Տասը րոպեում ես կանցնեմ Հարավային, Կենտրոնական և Արևմտյան նահանգները և հանգիստ կմտնեմ Կանադայի սահմանը:

Չնայած այն ամենին, որ շատ մութ էր, որ Բիլլն այդքան հաստամարմին էր ու ես էլ՝ շատ արագավազ, նրան կարողացա հասնել «Երկնաքերից» միայն մեկ ու կես մղոն հեռավորության վրա:

¹⁰ Փենգանս – ծովամերձ քաղաք Անգլիայի հարավում, Կորնուոլ թերակղզում:

¹¹ Բեդլամ – նախապես մարիամ Բեթղեհեմցու անվան հիվանդանոց, հետագայում՝ հոգեբուժարան Լոնդոնում (անվանումը՝ Բեթղեհեմ բառից):

¹² Մոկասիններ – թավշակաշվե փափուկ կոշիկներ, որ կրում են Հյուսիսային Ամերիկայի հնդկացիները:

